Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/38 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

24.10.2022թ.
ժամը՝ 11.30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Մաճկալյան, Մ.Համբարձումյան, Վ.Քեռյան, Ա.Լալայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Թադևոսյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	էջաբաժանիչ	75000
2	ուղղիչ գրիչներ	90000
3	կարիչ, 20-50 թերթի համար	110000
4	գրիչ գնդիկավոր	330000
5	մարկերներ	15200
6	գծանշիչ	98000
7	սոսնձամատիտ, գրասենյակային	140000
8	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	375000
9	թղթապանակ, թելով, թղթյա	63000
10	մկրատ, գրասենյակային	42000
11	գրիչ գելային	960000
12	աղբարկղ, մետաղյա	90000
13	նամակի ծրար, A4 ձ-աչափի	232000
14	նամակի ծրար, A5 ձ-աչափի	56400
15	նամակի ծրար, A6 ձ-աչափի	40600
16	գրենական պիտույքներ	50000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 20.10.2022թ.-ին ժամը 11:30-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 21.10.2022թ.-ին ժամը 11:30-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	«Սմարթլայն» ՍՊԸ	Վարդանանց 110	055 30 00 93	ssmartline@mail.ru
2	«Մայ Մարկետ» ՍՊԸ	Սաֆարյան 8/8	43 37 07 05	info.mymarket.2018@gmail.com

3	«ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ	Հանրապետության 61	095 60 55 65	agalstyanurartu@mail.ru
4	«Հայկ և Նարեկ» ՍՊԸ	Զավարյան փող., 57/19շ., բն. 129,	093 25 52 36	haykevnarek@rambler.ru
5	«Յասոն» ՍՊԸ	գ. Ձորաղբյուր, Սևանի 4	091 40 77 04	Yason@web.am
6	«Ֆորտունա սիթի» ՍՊԸ	ք. Գորիս, Արցախյան խճ. 22	094 43 15 63	fortunasity@mail.ru
7	«Սեկո-Պրինտ» ՍՊԸ	ք. Երևան, Զավարյան փ 57/19շ բն129	094 68 70 69	-

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/38 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	**«Սմարթլայն» ՍՊԸ**	65000	20 %	78000	61875	20 %	74250.00	
	«Մայ Մարկետ» ՍՊԸ	62500	20 %	75000	62500	20 %	75000.00	
2	**«Սմարթլայն» ՍՊԸ**	80000	20 %	96000	74250	20 %	89100.00	
	«Մայ Մարկետ» ՍՊԸ	75000	20 %	90000	75000	20 %	90000.00	
3	«Սմարթլայն» ՍՊԸ	133333.34	20 %	160000	133333.34	20 %	160000.00	Մերժված
4	**«Սմարթլայն» ՍՊԸ**	375000	20 %	450000	272250	20 %	326700.00	
	«Մայ Մարկետ» ՍՊԸ	275000	20 %	330000	275000	20 %	330000.00	
5	**«ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ**	10000	20 %	12000	9600	20 %	11520.00	
	«Սմարթլայն» ՍՊԸ	13333.34	20 %	16000	9700	20 %	11640.00	
	«Մայ Մարկետ» ՍՊԸ	12666.67	20 %	15200	12666.67	20 %	15200.00	
6	**«Մայ Մարկետ» ՍՊԸ**	81666.67	20 %	98000	81666.67	20 %	98000.00	
	«Սմարթլայն» ՍՊԸ	98000	20 %	117600	98000	20 %	117600.00	Մերժված
7	**«Մայ Մարկետ» ՍՊԸ**	116666.67	20 %	140000	50000	20 %	60000.00	
	«Սմարթլայն» ՍՊԸ	126666.67	20 %	152000	59000	20 %	70800.00	
	«ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ	100000	20 %	120000	80000	20 %	96000.00	
	«Հայկ և Նարեկ» ՍՊԸ	140000	0 %	140000	140000	0 %	140000.00	
8	**«Մայ Մարկետ» ՍՊԸ**	312500	20 %	375000	240000	20 %	288000.00	
	«Սմարթլայն» ՍՊԸ	416666.67	20 %	500000	246875	20 %	296250.00	
	«Հայկ և Նարեկ» ՍՊԸ	375000	0 %	375000	375000	0 %	375000.00	
9	«Յասոն» ՍՊԸ	72000	20 %	86400	72000	20 %	86400.00	Մերժված
	«Սմարթլայն» ՍՊԸ	75000	20 %	90000	75000	20 %	90000.00	Մերժված
10	**«Սմարթլայն» ՍՊԸ**	37916.67	20 %	45500	22750	20 %	27300.00	
11	**«Մայ Մարկետ» ՍՊԸ**	800000	20 %	960000	500000	20 %	600000.00	
	«Հայկ և Նարեկ» ՍՊԸ	960000	0 %	960000	592000	0 %	592000.00	
	«Սմարթլայն» ՍՊԸ	850000	20 %	1020000	742000	20 %	890400.00	

12	**«Մայ Մարկետ» ՍՊԸ**	75000	20 %	90000	75000	20 %	90000.00	
	«Սմարթլայն» ՍՊԸ	79166.67	20 %	95000	79166.67	20 %	95000.00	Մերժված
13	**«Ֆորտունա սիթի» ՍՊԸ**	237800	0 %	237800	207640	0 %	207640.00	
	«Սեկո-Պրինտ» ՍՊԸ	233000	0 %	233000	210000	0 %	210000.00	
14	**«Ֆորտունա սիթի» ՍՊԸ**	58280	0 %	58280	48316	0 %	48316.00	
	«Սեկո-Պրինտ» ՍՊԸ	57000	0 %	57000	49000	0 %	49000.00	
15	**«Ֆորտունա սիթի» ՍՊԸ**	42630	0 %	42630	34510	0 %	34510.00	
	«Սեկո-Պրինտ» ՍՊԸ	41000	0 %	41000	35000	0 %	35000.00	
16	**«Մայ Մարկետ» ՍՊԸ**	41666.67	20 %	50000	41250	20 %	49500.00	
	«Սմարթլայն» ՍՊԸ	46666.67	20 %	56000	46666.67	20 %	56000.00	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 21.10.2022թ. և Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել 1-ին, 2-րդ, 4-րդ և 10-րդ չափաբաժիններով «Սմարթլայն» ՍՊԸ-ն, 13-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժիններով «Ֆորտունա սիթի» ՍՊԸ-ն, 5-րդ չափաբաժնով «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ-ն, 6-րդ, 7-րդ, 8-րդ 11-րդ 12-րդ 16-րդ չափաբաժիններով «Մայ Մարկետ» ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ «Սմարթլայն» ՍՊԸ-ի, «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ-ի, «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«Սմարթլայն» ՍՊԸ-ի՝

- Հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:
- Հայտում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ Մասնակցի ղեկավարի պաշտոնը բացակայում է:
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի՝ /Հավելված 1.2/ 4-րդ բաժնի 4.3 և 4.4 ենթաբաժնի 4.3.2 և 4.4.2 կետերը ենթակա է շտկման, անհրաժեշտ է համայնքը նշել Երևան, քանի որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները:
- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Տեխնիկական բնութագիր» սյունակում 4-րդ չափաբաժնում առկա է <առնվազն> բնութագրիչ, որը անհրաժեշտ է հստակեցնել: 10-րդ չափաբաժնում առկա է մկրատի երկարությունը հստակ նշված չէ, որը անհրաժեշտ է հստակեցնել:

«Ֆորտունա սիթի» ՍՊԸ-ի՝

- Հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:
- Հայտում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

«ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ-ի՝

- Հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:
- Հայտում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ Մասնակցի ղեկավարի պաշտոնը բացակայում է:
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի՝ /Հավելված 1.2/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան
- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Տեխնիկական բնութագիր» սյունակում նշված է «Schneider կամ համարժեք» արտահայտությունը, որն ունի տարակերպ մեկնաբանություն, ուստի անհրաժեշտ է հստակ ներկայացնել առաջարկվող ապրանքը, Անհրաժեշտ է հստակեցնել նաև առաջարկվող ապրանքի հաստության միջակայքը: «Ապրանքային նշան» և «Արտադրող» սյունակները անհրաժեշտ է հստակեցնել:

«Մայ Մարկետ» ՍՊԸ-ի՝

- Հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:
- Հայտում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի՝ /Հավելված 1.2/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:
- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ 11-րդ չափաբաժնում առաջարկվող ապրանքի «Տեխնիկական բնութագիր» սյունակում նշված է «Uni-ball Micro Deluxe կամ համարժեք» արտահայտությունը, որն ունի տարակերպ մեկնաբանություն, ուստի անհրաժեշտ է հստակ ներկայացնել առաջարկվող ապրանքը: Առաջարկվող ապրանքի գնդիկի ծայրը հստակ չէ, որը անհրաժեշտ է հստակեցնել: 16-րդ չափաբաժնում հավաքածու գրասեղանի և դարակների քանակը անհրաժեշտ է հստակեցնել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/38 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 24.10.2022թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ «Սմարթլայն» ՍՊԸ-ին, «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ-ին, «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 26.10.2022թ. ժամը 11:30-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. *Տեղեկություն՝ հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման վերաբերյալ*

Նիստը վերսկսվեց 26.10.2022թ. ժամը 11:30-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «Սմարթլայն» ՍՊԸ-ն, «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ-ն, «Մայ Մարկետ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/38 ծածկագրով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 4-րդ, 10-րդ չափաբաժինների մասով, «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 11-րդ, 12-րդ, 16-րդ չափաբաժինների մասով, «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով գնահատել բավարար և «Ֆորտունա սիթի» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 13-րդ, 14-րդ, 15-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրերի կնքման վերաբերյալ

26.10.2022թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

1-ին, 2-րդ, 4-րդ և 10-րդ չափաբաժինների մասով «Սմարթլայն» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակից՝ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի հայտը մերժել.

2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակից՝ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի հայտը մերժել.

4-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակից՝ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի հայտը մերժել.

5-րդ չափաբաժնի մասով «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ -ին հայտարարել ընտրված մասնակից:

5-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցներ՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ի և «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի հայտերը մերժել.

6-րդ, 7-րդ, 8-րդ, 11-րդ, 12-րդ, 16-րդ չափաբաժինների մասով «Մայ Մարկետ» ՍՊԸ -ին հայտարարել ընտրված մասնակից:

6-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակից՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է համակարգի կողմից.

7-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցներ՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ի, «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ-ի և «Հայկ և Նարեկ» ՍՊԸ-ի հայտերը մերժել.

8-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցներ՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ի և «Հայկ և Նարեկ» ՍՊԸ-ի հայտերը մերժել.

11-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցներ՝ «Հայկ և Նարեկ» ՍՊԸ-ի և «Սմարթլայն» ՍՊԸ-ի հայտերը մերժել.

12-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակից՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է համակարգի կողմից.

16-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակից՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է համակարգի կողմից.

13-րդ, 14-րդ, 15-րդ չափաբաժինների մասով «Ֆորտունա սիթի» ՍՊԸ -ին հայտարարել ընտրված մասնակից:

13-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակից՝ «Սեկո-Պրինտ» ՍՊԸ-ի հայտը մերժել.

14-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակից՝ «Սեկո-Պրինտ» ՍՊԸ-ի հայտը մերժել.

15-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակից՝ «Սեկո-Պրինտ» ՍՊԸ-ի հայտը մերժել.

10.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

11. Տեղեկություն՝ ընթացակարգի չկայացած չափաբաժինների վերաբերյալ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աճուրդն ամփոփվելու պահին մասնակիցների ներկայացրած գները գերազանցել է ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը և Համակարգի կողմից մերժվել է վերջիններիս հայտերը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց՝

11.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա Ընթացակարգի 3-րդ և 9-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

11.2 Հաստատել ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/38 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝		Վարդան Թորոսյան
անդամներ՝		Միհրան Մաճկալյան
		Մարիամ Համբարձումյան
		Վազգեն Քեռյան
		Անժելա Լալայան
Քարտուղար՝		Հեղինե Թադևոսյան